ЛИНГВОКОГНИТИВНОЕ МОДЕЛИРОВАНИЕ МЕТАФОРЫ «ПОЛИТИКА — ЭТО ТЕАТР»

А. С. АРУТЮНЯН
ГУ им. В.Я. Брюсова
ani.harutyunyan88@gmail.com

А. Г. АГАЯН
ГУ им. В.Я. Брюсова
ann.aghayan@gmail.com

Статья посвящена анализу концептуальной метафоры «ПОЛИТИКА — ЭТО ТЕАТР». Исследовано, каким образом политическая реальность моделируется в языке как театральное представление. В центре внимания находятся лингвокогнитивные механизмы, посредством которых политические события интерпретируются через призму театральной постановки. Результаты анализа свидетельствуют о том, что данная метафора широко функционирует в американском политическом дискурсе, обеспечивая более наглядную, выразительную и доступную интерпретацию сложных политических процессов для широкой аудитории. В итоге политика моделируется как структурированное театральное представление, в рамках которого политические акторы, зрители и закулисные процессы совместно формируют целостную модель политической реальности.
Ключевые слова: *когнитивная метафора; политический дискурс; лингвокогнитивное моделирование; метафорическая модель; область-источник; область-цель*.

Փոխաբերությունները քաղաքական խոսույթի անբաժանելի մասն են և առանցքային դերակատարում ունեն քաղաքական ու հասարակական իրականության մեկնաբանման գործընթացում:

Քաղաքականությունը վերացական և բազմաշերտ երևույթ է, ուստի քաղաքական գործիչները հաճախ կիրառում են փոխաբերություններ՝ քաղաքական բարդ հասկացություններն ավելի պատկերավոր դարձնելու համար:

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆ Է փոխաբերության լեզվաճանաչողական առանձնահատկությունները ամերիկյան քաղաքական դաշտը լուսաբանող լրագրային հոդվածներում և բացահայտել այն ճանաչողական մեխանիզմները, որոնց միջոցով թատերական բառապաշարն օգտագործվում է փոխաբերաբար՝ ձևավորելով քաղաքական իրականության ընկալումը:

Ինչպես նշում է Ն.Զայչիկովան, քաղաքականությունը, ի տարբերություն սոցիալական գործունեության այլ ձևերի, ունի վառ արտահայտված խոսութային բնութագիր. լեզուն այստեղ գործում է ոչ միայն որպես քաղաքական իրականության արտացոլման միջոց, այլև որպես սոցիալական ուժ՝ ունակ պարտադրելու տեսակետներ քաղաքական հաղորդակցության գործընթացում [2: 17]:

Ընդգծելով փոխաբերության դերը քաղաքական խոսույթում՝ Ջ.Լեքոֆը և Մ.Ջոնսոնը սահմանում են այն որպես հասարակական և քաղաքական իրականության ձևավորման կարևորագույն գործոն [9: 160]: Փոխաբերությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել քաղաքական առաջնորդի ենթագիտակցական մտածողությունն ու ձգտումները: Միևնույն ժամանակ, այն արտացոլում է տվյալ ժողովրդի ազգային ինքնության առանձնահատկությունները և ցույց է տալիս հասարակության քաղաքական մտածելակերպի զարգացման աստիճանը [1: 6]:

Քաղաքական փոխաբերությունը որպես ուսումնասիրության առարկա գտնվում է հումանիտար գիտությունների երեք ոլորտների հատման կետում՝ ճանաչողական լեզվաբանություն, խոսութային վերլուծություն և հռետորաբանություն: Ճանաչողական լեզվաբանությունը ընդգծում է փոխաբերության կապը մարդու մտածողության և ճանաչողական համակարգերի հետ, խոսութային վերլուծությունը դիտարկում է այն որպես մտակառույցների ձևավորման գործիք, իսկ հռետորաբանությունը՝ փոխաբերության դերը հաղորդակցական գործընթացում՝ այն դիտարկելով որպես

ազդեցության և համագործակցության միջոց: Այս մոտեցումների համադրությամբ քաղաքական փոխաբերությունը ձեռք է բերում բազմաչափելիություն՝ դառնալով լեզվի, մտածողության, հասարակության, մշակույթի փոխազդեցության արդյունք [5: 35-36]:

Զ.Կովեչեսի դիտարկմամբ՝ քաղաքական խոսույթը հագեցած է ճանաչողական փոխաբերություններով, որոնք ձևավորում են քաղաքական իրականության ընկալումը: Մասնավորապես, քաղաքական խոսույթը խարսխված է այնպիսի փոխաբերական կաղապարների վրա, ինչպիսիք են՝ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄ Է, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԻԶՆԵՍ Է, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂ Է և այլն [7: 68]:

Ընդգծելով և կարևորելով փոխաբերության ճանաչողական բնույթը՝ Ա.Զուդինովը նշում է, որ փոխաբերությունները մտածողության անբաժանելի մասն են կազմում և արմատացած են մարդկային մտածողության ճանաչողական համակարգում [3: 37]: Նա առաջարկում է քաղաքական խոսույթի հետևյալ փոխաբերական կաղապարները՝ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՕՐԳԱՆԻԶՄ Է, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆ Է, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏ Է, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄ Է, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է և այլն [4]:

Սույն հոդվածում փորձ է արվում խորքային և համակողմանիորեն ուսումնասիրել ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆ Է ճանաչողական փոխաբերությունը, ինչպես նաև առանձնացնել և համակարգել այն փոխաբերական միավորները, որոնք ձևավորում են վերոնշյալ փոխաբերական կաղապարի ճանաչողական հիմքը և ապահովում դրա ճանաչողական մոդելավորումը լեզվում:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆ Է փոխաբերության արտապատկերումը բազմաշերտ է, քանի որ այն ներառում է երկու բարդ ճանաչողական տիրույթներ՝ «թատրոն» և «քաղաքականություն», որոնք իրենց հերթին բաղկացած են մի շարք հասկացույթներից, կամ, ինչպես Զ.Գրեյդին է նշում, «պարզ փոխաբերություններից» [6: 308]: Ըստ Զ.Գրեյդիի՝ «բոլոր բարդ

փոխաբերությունները «մոլեկուլային» են՝ բաղկացած «ատոմային» փոխաբերական մասերից, որոնք կոչվում են պարզ փոխաբերություններ: Պարզ փոխաբերությունների ճանաչողական միաձուլման արդյունքում «ծնվում» են բարդ փոխաբերությունները» [8: 51]:

Առաջնորդվելով Ջ.Գրեյդիի առաջարկած պարզ փոխաբերությունների տեսությամբ՝ կարող ենք վստահաբար շեշտել, որ ուսումնասիրվող ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆ Է փոխաբերությունը բարդ է՝ բաղկացած բազմապիսի պարզ փոխաբերություններից:

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՐՇԱՎԸ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓՈՐՁ Է

Քաղաքական ընտրությունների սկզբնական փուլը նմանեցվում է բեմական փորձին, որտեղ գործողությունները դեռ վերջնական չեն, այլ փորձարկվում են և կատարելագործվում: Այս փոխաբերական ենթակաղապարում օգտագործվում են հետևյալ փոխաբերական միավորները՝ “***dress rehearsal”; “test-drive lines”; “set the stage”; “go off-script”; “stay on script”; “new plot twist”***: Դիտարկենք հետևյալ օրինակը՝

- *In the eyes of many experts and election officials, the 2022 midterms were a **dress rehearsal** for the 2024 presidential election.* [11]

Վերոնշյալ քաղաքական հոդվածում “**dress rehearsal**” փոխաբերական միավորի միջոցով 2022 թվականի միջանկյալ ընտրություններն ընկալվում են որպես «նախապատրաստական թատերական փորձ»՝ 2024 թվականի նախագահական ընտրությունների համար:

Նախքան ընտրությունների հիմնական փուլի մեկնարկը՝ կազմակերպվում են բազմապիսի փորձնական միջոցառումներ՝ ստուգելու հանրության արձագանքը, մշակվում է քաղաքական ծրագրի նախնական տարբերակը, ինչպես հետևյալ օրինակներում՝

- *... quasi-public events like fundraisers allow Biden to **test-drive lines** and thoughts* [23]

- *Biden unplugged:* ***President goes off-script*** *in election fundraisers* [12]

- *Trump* ***struggles to stay on script,*** *frustrating GOP again... But this week,* ***the unscripted Trump*** *started showing up again more often.* [29]

- *So why does it feel like an* ***unwanted movie sequel*** *–* ***same actors****, predictable* ***new plot twist.*** [16]

Վերոնշյալ օրինակներում ***"test-drive lines'', "go off-script"***, "***struggle to stay on script", "the unscripted Trump"*** փոխաբերական միավորները քաղաքական գործիչների ելույթները ներկայացնում են որպես նախապես գրված սցենարներ, որտեղ նրանք, դերասանների նման, փորձում եմ չշեղվել այդ սցենարից, քանի որ ցանկացած շեղում և ինքնաբուխ խոսք կարող է վտանգել նրանց քաղաքական կարիերան: Միևնույն ժամանակ, վերջին լրագրային հոդվածում ***"unwanted movie sequel; same actors; predictable new plot twist"*** փոխաբերական միավորների միջոցով քաղաքական գործընթացն ընկալվում է որպես կրկնվող ներկայացումների շարք, որտեղ դերակատարները մնում են նույնը, իսկ սյուժետային զարգացումները՝ կանխատեսելի: Այս փոխաբերական միավորների միջոցով քաղաքական գործընթացն ընկալվում է ոչ թե որպես պատահական իրադարձությունների շարք, այլ նախապես կազմակերպված, վերահսկվող և կրկնվող թատերական սցենար:

Քաղաքականության մեջ, նախքան ընտրությունների հիմնական փուլը, թիմակիցները ձևավորում են քաղաքական «բեմահարթակը», ձեռնարկում բոլոր հնարավոր գործողությունները իրենց քաղաքական առաջնորդի հաղթանակի համար, ինչպես հետևյալ օրինակում՝

- ... ***"set stage for Trump comeback"*** [12]

Այս քաղաքական հոդվածում հանրապետականների հնարավոր հաղթանակը Կոնգրեսում մեկնաբանվում է որպես նախաբեմային փուլ՝ Դ.Թրամփի քաղաքական վերադարձի համար, իսկ քաղաքական ներկա զարգացումները որպես բեմի նախապատրաստում ապագա ներկայացման համար:

Այս փոխաբերական ենթակաղապարը ցույց է տալիս, որ քաղաքական իրականությունը նախապես «բեմադրվում» է մինչև իր վերջնական հանրայնացումը:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅՆԱՑՈՒՄԸ ԲԵՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Է

Այս փոխաբերական ենթակաղապարը արտացոլում է անցումը նախապատրաստական փուլից դեպի քաղաքական գործընթացների հրապարակային փուլ: Թատերական պրակտիկայում բեմադրության պաշտոնական մեկնարկը ազդարարվում է կարմիր գորգի արարողությամբ և վարագույրի բարձրացմամբ, ինչը փոխաբերաբար արտահայտվում է նաև քաղաքական խոսույթում՝ "**roll out the red carpet**" և "**raise the curtain**" փոխաբերական միավորների միջոցով՝ նկարագրելով գործընթացի սկիզբը կամ դրա հանրայնացումը, ինչպես հետևյալ օրինակներում՝

- *Republicans **roll out red carpet** for Trump ahead of joint address to Congress* [18]
- *First ballots to go out, **raising curtain on** 2024 US election.* [30]

Բերված օրինակներում քաղաքական գործընթացը ներկայացվում է իբրև բեմականացված իրադարձության սկիզբ, որտեղ քվեարկության մեկնարկն ազդարարում է ընտրությունների պաշտոնական բացումը:

Այս ենթակաղապարի շրջանակում քաղաքական դաշտն ընկալվում է թատերաբեմ, ուր դերակատարները հայտնվում են տարբեր բեմերում՝ իրականացնելով իրենց դերային գործողությունները: Դիտարկենք հետևյալ օրինակները՝

- *Biden has been a candidate **on the national stage**.* [16]
- *When America witnessed a pale and feeble Joe Biden take the **debate stage**...* [21]
- *Higher Education Will Take **Center Stage** in 2024 Presidential Election.* [27]
- *Vice President Kamala Harris in the last seven days, **emerging, blasting out from behind the curtain** of the Biden presidency onto **a stage of her own.**"* [15]

Այս փոխաբերական միավորների համադրությունը ցույց է տալիս, որ ամերիկյան քաղաքական գործընթացներն ընկալվում են որպես բեմականացված ներկայացումներ, երբ քաղաքական գործիչները հայտնվում են տարբեր «բեմերում» (“**national stage”, “debate stage**”), իսկ քաղաքական օրակարգի հրատապ խնդիրները ստանում են առաջնային տեսանելիություն (“**center stage**”): Առանձնահատուկ ուշադրության են արժանի վերջին հոդվածում կիրառված “**behind the curtain**” և “**stage of her own**” փոխաբերական միավորները, որոնք բացահայտում են քաղաքական դերային դինամիկան: Լեզվաճանաչողական տեսանկյունից այս փոխաբերական միավորները բացահայտում են Ք.Հարիսի քաղաքական դերային վերափոխումը՝ կուլիսային դիրքից դեպի կենտրոնական դիրք:

Ցանկացած ներկայացում անիմաստ է առանց այն մարմնավորող դերակատարների, ուստի, սա տրամաբանորեն հանգեցնում է հաջորդ ենթակաղապարի քննությանը:

3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ ԵՆ

Այս ենթակաղապարը փոխլրացնում է նախորդին՝ կենտրոնանալով հիմնական մասնակիցների՝ քաղաքական գործիչների վրա: Դիտարկենք հետևյալ օրինակները՝

- *“Several Republican House members appeared willing **to play the role Trump proposed for them.”*** [31]
- *“Kamala Harris **defines her role**:”* [13]
- *Kamala Harris trounced Trump at Tuesday’s debate, but to win the election she and Tim Walz will have **to keep giving performances** like it for the next 55 days.* [14]

Վերոնշյալ բոլոր օրինակներում առանցքային է «դեր» հասկացությունը (“**define her role”, “play the role**”), որի միջոցով քաղաքական գործիչները ներկայացվում են որպես դերակատարներ, որոնք ստանձնում և իրագործում են բազմաբնույթ գործառույթներ: Այս համատեքստում քաղաքական ինքնությունը ձևավորվում է դերերի բարդ համակարգի շրջանակում, որտեղ դերակատարները ճկուն կերպով հարմարվում են տարբեր իրավիճակների՝

իրականացնելով բազմաշերտ գործառույթներ: Վերջին հոդվածում օգտագործված “**keep giving performances**” փոխաբերական միավորը լրացուցիչ ընդգծում է այն մոդելը, ըստ որի՝ քաղաքականությունը ընկալվում է որպես շարունակական դերակատարումների թատերաբեմ:

Բացի տարբեր դերերից, երբեմն թեկնածուները ներկայացվում են որպես շոումեն (“***showman***”), ստենդափ–կատակերգու (“***stand-up comic***”) կամ կրկեսավար (“***ringmaster of multiple sideshows***”), որտեղ ընտրությունները հիմնականում համեմատվում են կրկեսի հետ: Օրինակ՝

- *Donald Trump is still a **showman** who knows how **to put on a performance** and get even a hostile crowd on his side <…> **Trump's solo show** looks like the one you'd buy a ticket for. <…> his body language suggests the kind of easy-going confidence of a **stand-up comic** …. Trump is **a ringmaster of multiple sideshows** as Biden cranks up pace of reelection bid.* [17].

Այս հոդվածում Դ.Թրամփը բնութագրվում է որպես կրկեսավար և հմուտ շոումեն, ով կարողանում է մտաշահարկման միջոցով ազդել թիրախ լսարանի գիտակցության վրա՝ դրսևորելով խարիզմա և բեմական տաղանդ: Ավելին, “***Trump's solo show; stand-up comic*** ” փոխաբերական միավորները ընդգծում են քաղաքական գործչի անձնակենտրոն և թատերականացված գործելաոճը, որի գերակա նպատակը լսարանին միաժամանակ զվարճացնելն է ու համոզելը: Տրամաբանական նույն հենքի վրա է կառուցված նաև “***ringmaster of multiple sideshows***“ փոխաբերական միավորը, որը վերջինիս բնութագրում է իբրև հմուտ «կրկեսավարի»՝ ունակ հանրային ուշադրությունը նպատակային կերպով ուղղորդելու երկրորդական, սակայն առավել սենսացիոն բնույթ կրող թեմաների վրա: Նշված փոխաբերությունների համալիր քննությունը թույլ է տալիս կառուցել Դ.Թրամփի կերպարը՝ որպես վարպետ մանիպուլյատորի և քաղաքական «ներկայացման» գլխավոր մենակատարի:

Ինչ փաստում է վերլուծությունը, ամերիկյան քաղաքական «թատերաբեմում» առաջնային դերակատարումը ստանձնում են նախագահի թեկնածուները, ի դեմս Դ.Թրամփի, Ջ.Բայդենի և

Ք.Հարիսի, մինչդեռ երկրորդական գործառույթները՝ կուսակցական այն գործիչները, որոնք ապահովում են կազմակերպչական աշխատանքները: Ասվածի վկայությունն է հետևյալ լրագրային օրինակը՝

- *"Both tend to be **behind-the-scenes players**..."* [12]

Այս լրագրային հոդվածում "**behind-the-scenes players**" փոխաբերական միավորի միջոցով արտապատկերվում են քաղաքական թիմի այն անդամները, ովքեր, թեև գործում են հանրային տեսանելիության դաշտից դուրս՝ «կուլիսներում», այնուամենայնիվ, վճռորոշ ազդեցություն ունեն քաղաքական գործընթացների զարգացման ընթացքի վրա:

Բացի գլխավոր դերակատարներից և քաղաքական «կուլիսներում» գործող թիմակիցներից, քաղաքական դաշտում հանդիպում են նաև, այսպես կոչված, «երրորդ կուսակցության թեկնածուներ», որոնք, թատերական եզրութաբանությամբ, նկարագրվում են որպես «դերեր փչացնողներ» (**spoilers**), ինչպես ակնառու է հետևյալ լեզվական դրսևորումներում՝

- *"Some argue that **third-party candidates play the role of spoiler."** [31]*
- *Because **third-party candidates** are unlikely to win the presidential election, they may **act as "spoilers."*** [24]

Այս հոդվածում կիրառվող "***play the role of spoiler", "act as "spoilers"*** փոխաբերական միավորները արտապատկերում են այն թեկնածուներին, որոնք նպատակ ունեն ոչ թե հաղթել, այլ խաթարել հիմնական մրցակիցների հնարավորությունները՝առաջացնելով մրցակցային անհավասարակշռություն:

Ամփոփելով իրականացված վերլուծությունը՝ կարող ենք փաստել, որ **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ ԵՆ** փոխաբերական ենթակաղապարն աչքի է ընկնում կիրառելիության խիստ բարձր հաճախականությամբ: Այս

ենթակաղապարի շրջանակներում քաղաքական գործիչներն ընկալվում և դասակարգվում են ըստ իրենց իրագործած դերերի:

Այս փոխաբերական ենթակաղապարի քննությունը տրամաբանորեն հանգեցնում է հաջորդ՝ **ԸՆՏՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՄԵԴԻԱՆ ՀԱՆԴԻՍԱՏԵՍ ԵՆ** ենթակաղապարի ուսումնասիրությանը, որտեղ քաղաքական հաղորդակցությունն անխուսափելիորեն ենթադրում է նաև հանդիսատեսի՝ ընտրողների և զանգվածային մեդիայի մասնակցությունը՝ որպես գործընթացը դիտարկող և գնահատող սուբյեկտներ:

4. ԸՆՏՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՄԵԴԻԱՆ ՀԱՆԴԻՍԱՏԵՍ ԵՆ

Այս ենթակաղապարի շրջանակում լսարանի՝ ընտրողների ու մեդիայի ուշադրությունը կենտրոնացնելու, գրավելու և պահելու նպատակով քաղաքական գործիչները կիրառում են տարբեր լուսային և բեմական հնարքներ (“**spotlight”, “front and center”**): Քաղաքական քարոզարշավները հաճախ կազմակերպվում են որպես հանրային զանգվածային «շոուներ», որոնք ուղեկցվում են ընդգծված հանդիսավորությամբ, ինչն արտացոլվում է “**fanfare”** փոխաբերական միավորի կիրառմամբ: Դիտարկենք հետևյալ օրինակները՝

- *Trump struggles with Harris **in the spotlight.*** [10]
- Harris tries to put Trump's age ***front and center*** [19]
- *In the 2024 election year, caucuses throughout the country are bringing with them **political fanfare and flurries of media attention.*** [22]

Այս քաղաքական հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ Դ.Թրամփի և Ք. Հարիսի քաղաքական մրցակցությունը տեղի է ունենում բարձր տեսանելիության պայմաններում: Ավելին, Ք. Հարիսը ներկայացվում է որպես դերակատար, ով նպատակային կերպով փորձում է Դ.Թրամփի տարիքը դարձնել հանրային քննարկման գլխավոր թեմա: Վերջին հոդվածում **“political fanfare”** փոխաբերական միավորի գործածությամբ կուսակցական ժողովները

կաղապարվում են որպես մեդիայի և հանրության մշտական ուշադրության կիզակետում գտնվող հանրային «ներկայացումներ»: Այս համատեքստում, քաղաքական դերակատարների գերխնդիրը մեդիայի և հանրության ուշադրության նպատակային ուղղորդումն է շահեկան թեմաների վրա, իսկ քաղաքական գործընթացի վերջնանպատակը հանրային ճանաչելիության և տեսանելիության գագաթնակետին հասնելն է, ինչն էլ արտահայտվում է “**up in lights**” փոխաբերական միավորով: Օրինակ՝

- US election results: ***Biden's name finally up in lights*** - but now he has to deliver [25]

Այս հոդվածում Բայդենի անունը «լույսերի մեջ հայտնվելը» ընկալվում է որպես նրա քաղաքական հաղթանակի և հանրային ճանաչման պաշտոնական հաստատում, որը համարժեք է թատերական ներկայացման գլխավոր դերակատարի ճանաչմանը: Միաժամանակ, հաջողությունը գնահատվում է ոչ թե միայն «բեմ բարձրանալով», այլ իրական արդյունք «ապահովելով», ինչպես դա ակնարկվում է Ջ.Բայդենի դեպքում (**“but now he has to deliver”):**

Քաղաքական խոսույթում, արտաքին տեսանելի գործընթացներին զուգահեռ, կարևորվում է նաև կուլիսային աշխատանքը, որը, թեպետ դուրս է հանրային ուշադրությունից, սակայն ունի որոշիչ նշանակություն քաղաքական գործընթացում:

5. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒԼԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ Է

Զուգահեռներ անցկացնելով նախորդ ենթակաղապարի հետ՝ հարկ է նշել, որ քաղաքականությունը ներկայացվում է երկշերտ կառուցվածքով. մի կողմից որպես հանրային, բեմականացված «ներկայացում», մյուս կողմից՝ որպես կուլիսներում ընթացող կազմակերպչական գործընթաց: Այսպիսով, ձևավորվում է քաղաքական խոսույթի ճանաչողական երկբևեռ մոդել, որտեղ տեսանելի շերտում կառուցվում է քաղաքական իմիջն ու հանրային ազդեցությունը, իսկ անտեսանելի՝ «վարագույրից այն կողմ» մակարդակում, ապահովվում են նույն գործընթացի իրականացման մեխանիզմները: Դիտարկենք հետևյալ առանձնացված լրագրային

օրինակները՝

- ***Behind the 2024 US Election Curtain:*** *Cyberwar's Silent Sabotage.* [20]
- *Barack Obama worked* ***"behind the scenes"*** *to prevent Kamala Harris' nomination* [26]
- ***Backstage maneuvering*** *begins in wide-open GOP chairman's race* [28]

Վերլուծված լրագրային օրինակներում կիրառված ***"behind the scenes"***, ***"behind the 2024 US election curtain"***, ***"backstage maneuvering"*** փոխաբերական միավորները լեզվաճանաչողության տեսանկյունից արտապատկերում են քաղաքական գործընթացների անտեսանելի շերտը: Հենց այս կուլիսային տիրույթում է իրագործվում քաղաքական կառավարման գաղտնի և ռազմավարական աշխատանքը:

Իրականացված վերլուծության արդյունքները համակարգված կերպով ներկայացված են ստորև բերված **ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆ Է** փոխաբերական կաղապարի միջտիրույթային արտապատկերումներում, որոնք բացահայտում են աղբյուր և թիրախ տիրույթների միջև առկա ճանաչողական համապատասխանությունները և կառուցվածքային փոխկապակցվածությունը:

Աղյուսակ 1

Աղբյուր տիրույթ: ԹԱՏՐՈՆ		**Թիրախ տիրույթ: ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**
թատերական փորձ	⇨	քաղաքական ընտրարշավ
թատերական սցենար	⇨	քաղաքական ծրագիր
թատերական ներկայացում	⇨	քաղաքականության հանրայնացում
դերակատարներ	⇨	քաղաքական գործիչներ

հանդիսատես	⇨	ընտրողներ և մեդիա
կուլիսային գործընթացներ	⇨	ստվերային գործընթացներ

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ «թատրոն» աղբյուր տիրույթի միջոցով մոդելավորվում է «քաղաքականություն» թիրախ տիրույթը՝ որպես բեմականացված և փուլային կառուցվածք ունեցող գործընթաց: Այս փոխաբերական կաղապարի միջտիրույթային արտապատկերումների հիմքում ընկած են **ցիկլային զարգացում** (**cycle**) և **գործընթաց** (**process**) պատկեր–սխեմաները, որոնք ներկայացնում են ողջ քաղաքական գործընթացը որպես թատերական ներկայացման ցիկլային զարգացումներ՝ նախապատրաստում → սցենարի ձևավորում → բեմականացում → դերերի բաշխում → հանդիսատեսի արձագանք → կուլիսային գործընթացներ՝ ապահովելով քաղաքական «ներկայացման» ամբողջական ցիկլային շարժը:

Սույն հոդվածում իրականացված ամերիկյան քաղաքականությունը լուսաբանող շուրջ 150 լրագրային հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ **ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆ Է** փոխաբերական կաղապարն ունի լայն կիրառություն ամերիկյան լեզվամշակույթում՝ պայմանավորված «թատրոն» աղբյուր տիրույթի ճանաչողական մատչելիությամբ և մշակութային խորը արմատավորվածությամբ: Այս փոխաբերական կաղապարի օգնությամբ քաղաքական ողջ գործընթացը մոդելավորվում է որպես բեմականացված ամբողջական գործընթաց, որը ներառում է դերակատարում, դերերի բաշխում, սցենար, հանդիսատեսի գնահատում և կուլիսային գործընթացներ: Այսպիսով, թատերական փոխաբերությունները ոչ միայն լեզվական միջոցներ են, այլև արդյունավետ ճանաչողական գործիքներ, որոնք ձևավորում են քաղաքական ընկալումը ժամանակակից ամերիկյան հասարակությունում:

ЛИТЕРАТУРА

1. *Будаев Э.В., Чудинов А.П.* Зарубежная политическая метафорология: Монография. Екатеринбург: Урал. гос. пед. ун-т., 2008. – 248 с.

2. *Зайчикова Н.В* Языковой образ современного американского политика: от объективного к моделируемому. Монография. Благовещенск: Амурский государственный университет, 2011. – 227 с.
3. *Чудинов А.П.* Россия в метафорическом зеркале: Когнитивное исследование политической метафоры (1991–2000). Монография. Екатеринбург: Урал. гос. пед. ун-т, 2001. – 238 с.
4. *Чудинов А.П.* Политическая лингвистика. Учебное пособие. М.: Флинта: Наука, 2006. – 256 с.
5. *Скребцова Т.Г.* Современные исследования политической метафоры // Вестник Санкт-Петербургского университета. Сер. 9. Вып. 1. 2005. С. 35–46.
6. *Evans V., Green M.* Cognitive Linguistics. Edinburgh University Press, 2006. – 830 p.
7. *Kövecses Z.* Metaphor in Culture // Acta Universitatis Sapientiae, Philologica, 2, 2 (2010). pp. 197-220.
8. *Lakoff G., Johnson M.* Philosophy in the Flesh: The Embodied Mind and Its Challenge to Western Thought. New York: Basic Books, 1999. – 590 p.
9. *Lakoff G., Johnson M.* Metaphors We Live by. London: The University of Chicago Press, 2003. – 276 p.

ЭЛЕКТРОННЫЕ РЕСУРСЫ

10. Apple Podcasts. Trump struggles with Harris in the spotlight // URL: https://l1nk.dev/qqikp2a (accessed 04.04.2026).
11. BPCElections Summit. Panel 3 // URL: https://l1nq.com/q5r17ck (accessed 06.04.2026).
12. CNN Politics. Democrats refine messaging against Trump // URL: https://sl1nk.com/4dkhcaf (accessed 06.04.2026).
13. CNN Politics. Kamala Harris historic vice president nomination // URL: https://sl1nk.com/0g0siu8 (accessed 15.04.2025).
14. CNN Politics. Kamala Harris interview // URL: https://l1nq.com/9asxzog (accessed 11.04.2025).
15. CNN Politics. Kamala Harris presidential campaign // URL: https://sl1nk.com/ms5n7ew (accessed 12.04.2026).
16. CNN Politics. Old men for president: what matters // URL: https://l1nq.com/a5exyq4 (accessed 04.04.2026).
17. CNN Politics. Trump–Biden campaign contrast // URL: https://sl1nk.com/jz2hi4y (accessed 13.04.2025).

18. Courthouse News Service. Republicans roll out red carpet for Trump ahead of joint address to Congress // URL: https://l1nq.com/77ig6o4 (accessed 04.04.2026).
19. NBC News. Harris tries to put Trump's age front and center // URL: https://sl1nk.com/3rwd31c (accessed 06.04.2026).
20. NSFocus Global. Behind the 2024 US election curtain // URL: https://l1nq.com/9qqhwlf (accessed 12.04.2026).
21. Politico. Biden campaign dropout timeline // URL: https://l1nq.com/2u15aqa (accessed 06.04.2026).
22. Politico. Joe Biden presidential election coverage // URL: https://sl1nk.com/j785ryj (accessed 12.04.2026).
23. Reuters. Joe Biden "unplugged": fundraisers clash with scripted politics // URL: https://l1nq.com/0e30k7a (accessed 14.04.2026).
24. Royal Examiner. Third-party candidates hold appeal but received slightly less votes this election // URL: https://sl1nk.com/yg2300y (accessed 05.05.2026).
25. Sky News. Biden's name up in lights but challenges remain // URL: https://l1nq.com/gopipkw (accessed 06.04.2026).
26. The Economic Times. Obama worked behind the scenes on Harris nomination // URL: https://sl1nk.com/sxtoma6 (accessed 04.04.2026).
27. The Edu Ledger. Higher education will take center stage in 2024 presidential election // URL: https://sl1nk.com/shtbogu (accessed 12.04.2026).
28. The Hill. Backstage maneuvering in GOP chairman race // URL: https://l1nq.com/8tganjq (accessed 12.04.2026).
29. The Hill. Trump struggles to stay on script // URL: https://l1nq.com/qtigy90 (accessed 12.04.2026).
30. The Straits Times. First ballots to go out, raising curtain on 2024 US election // URL: https://l1nq.com/sif1gw7 (accessed 04.04.2026).
31. U.S. News. Election 2024 coverage articles // URL: https://sl1nk.com/evs4dqc (accessed 05.04.2026).

REFERENCE

1. *Budayev E.V., Chudinov A.P.* Zarubezhnaya politicheskaya metaforologiya: Monografiya. Yekaterinburg: Ural. gos. ped. un-t., 2008. – 248 s.

2. *Zaychikova N.V* YAzykovoy obraz sovremennogo amerikanskogo politika: ot ob"yektivnogo k modeliruyemomu. Monografiya. Blagoveshchensk: Amurskiy gosudarstvennyy universitet, 2011. – 227 s.
3. *Chudinov A.P.* Rossiya v metaforicheskom zerkale: Kognitivnoye issledovaniye politicheskoy metafory (1991–2000). Monografiya. Yekaterinburg: Ural. gos. ped. un-t, 2001. – 238 s.
4. *Chudinov A.P.* Politicheskaya lingvistika. Uchebnoye posobiye. M.: Flinta: Nauka, 2006. – 256 s.
5. *Skrebtsova T.G.* Sovremennyye issledovaniya politicheskoy metafory // Vestnik Sankt-Peterburgskogo universiteta. Ser. 9. Vyp. 1. 2005. S. 35–46.
6. *Evans V., Green M.* Cognitive Linguistics. Edinburgh University Press, 2006. – 830 p.
7. *Kövecses Z.* Metaphor in Culture // Acta Universitatis Sapientiae, Philologica, 2, 2 (2010). pp. 197-220.
8. *Lakoff G., Johnson M.* Philosophy in the Flesh: The Embodied Mind and Its Challenge to Western Thought. New York: Basic Books, 1999. – 590 p.
9. *Lakoff G., Johnson M.* Metaphors We Live by. London: The University of Chicago Press, 2003. – 276 p.

ELEKTRONNYYE RESURSY

10. Apple Podcasts. Trump struggles with Harris in the spotlight // URL: https://l1nk.dev/qqikp2a (accessed 04.04.2026).
11. BPCElections Summit. Panel 3 // URL: https://l1nq.com/q5r17ck (accessed 06.04.2026).
12. CNN Politics. Democrats refine messaging against Trump // URL: https://sl1nk.com/4dkhcaf (accessed 06.04.2026).
13. CNN Politics. Kamala Harris historic vice president nomination // URL: https://sl1nk.com/0g0siu8 (accessed 15.04.2025).
14. CNN Politics. Kamala Harris interview // URL: https://l1nq.com/9asxzog (accessed 11.04.2025).
15. CNN Politics. Kamala Harris presidential campaign // URL: https://sl1nk.com/ms5n7ew (accessed 12.04.2026).
16. CNN Politics. Old men for president: what matters // URL: https://l1nq.com/a5exyq4 (accessed 04.04.2026).
17. CNN Politics. Trump–Biden campaign contrast // URL: https://sl1nk.com/jz2hi4y (accessed 13.04.2025).

18. Courthouse News Service. Republicans roll out red carpet for Trump ahead of joint address to Congress // URL: https://l1nq.com/77ig6o4 (accessed 04.04.2026).
19. NBC News. Harris tries to put Trump's age front and center // URL: https://sl1nk.com/3rwd31c (accessed 06.04.2026).
20. NSFocus Global. Behind the 2024 US election curtain // URL: https://l1nq.com/9qqhwlf (accessed 12.04.2026).
21. Politico. Biden campaign dropout timeline // URL: https://l1nq.com/2u15aqa (accessed 06.04.2026).
22. Politico. Joe Biden presidential election coverage // URL: https://sl1nk.com/j785ryj (accessed 12.04.2026).
23. Reuters. Joe Biden "unplugged": fundraisers clash with scripted politics // URL: https://l1nq.com/0e30k7a (accessed 14.04.2026).
24. Royal Examiner. Third-party candidates hold appeal but received slightly less votes this election // URL: https://sl1nk.com/yg2300y (accessed 05.05.2026).
25. Sky News. Biden's name up in lights but challenges remain // URL: https://l1nq.com/gopipkw (accessed 06.04.2026).
26. The Economic Times. Obama worked behind the scenes on Harris nomination // URL: https://sl1nk.com/sxtoma6 (accessed 04.04.2026).
27. The Edu Ledger. Higher education will take center stage in 2024 presidential election // URL: https://sl1nk.com/shtbogu (accessed 12.04.2026).
28. The Hill. Backstage maneuvering in GOP chairman race // URL: https://l1nq.com/8tganjq (accessed 12.04.2026).
29. The Hill. Trump struggles to stay on script // URL: https://l1nq.com/qtigy90 (accessed 12.04.2026).
30. The Straits Times. First ballots to go out, raising curtain on 2024 US election // URL: https://l1nq.com/sif1gw7 (accessed 04.04.2026)
31. U.S. News. Election 2024 coverage articles // URL: https://sl1nk.com/evs4dqc (accessed 05.04.2026).

«ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆ Է» ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ

Ա. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. Գ. ԱՂԱՅԱՆ

Վ. Բրյուսովի պետական համալսարան

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել «*քաղաքականությունը թատրոն է*» փոխաբերության լեզվաճանաչողական առանձնահատկությունները և ճանաչողական մոդելավորումը ամերիկյան քաղաքական դաշտը լուսաբանող լրագրային հոդվածներում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ այս փոխաբերական կաղապարը լայնորեն կիրառվում է ամերիկյան քաղաքական խոսույթում՝ նպաստելով բարդ քաղաքական երևույթների պարզ և հանրամատչելի ներկայացմանը: Արդյունքում քաղաքականությունն ընկալվում է որպես փուլային կառուցվածք ունեցող «թատերական ներկայացում», որտեղ դերակատարները, հանդիսատեսը և կուլիսային գործընթացները միասին ձևավորում են քաղաքական իրականության ամբողջական մոդելը:

Բանալի բառեր՝ *ճանաչողական փոխաբերություն, քաղաքական խոսույթ, լեզվաճանաչողական մոդելավորում, փոխաբերական կաղապար, աղբյուր տիրույթ, թիրախ տիրույթ:*

LINGUO-COGNITIVE MODELLING OF THE “POLITICS IS THEATRE” METAPHOR

A. S. HARUTYUNYAN, A. G. AGHAYAN
Brusov State University

This article explores the conceptual metaphor “*politics is theatre*” and examines how political reality is shaped through theatrical metaphors. It focuses on the linguo-cognitive mechanisms that enable political events to be interpreted in theatrical terms. The analysis shows that this metaphor is widely used in American political discourse as it helps make complex

political processes clearer, more vivid, and more accessible to the general public. As a result, politics is often modelled as a carefully structured theatrical performance in which political actors, the audience and backstage processes together construct a coherent representation of political reality.

Key words: *cognitive metaphor; political discourse; linguo-cognitive modelling; metaphorical model; source domain; target domain*

Информация о статье: статья поступила в редакцию 23 марта 2026 г., подписана к печати в № 1.CXXII (122).2026 30.05.2026.